

Արձանագրություն N 3

Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.03.2025թ.

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի վարչական աշխատանքների գծով գլխավոր տնօրենի տեղակալ՝ Լ. Զաքարյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական աշխատանքների գծով գլխավոր տնօրենի տեղակալ՝ Ա. Առաքելյան,

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի սպասարկման բաժնի պետ՝ Հ. Պողոսյան,

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի սպասարկման բաժնի պետի տեղակալ՝ Բ. Գասպարյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գևորգյան:

«ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2024/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2. «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Armepps համակարգի կողմից չվերժված հայտերում պիտու-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:

4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

5. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին.

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

7. «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armepps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 Ըստ www.armepps.am կայքի տվյալների՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար «ք. Երևան, Իսահակյան 28 հասցեի շենքի նոր վերելակի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	ՌԱՏԵԼԳՐԻԳ ՍՊԸ
2	Պրո Բիլդերս ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Armepps համակարգի միջոցով ներկայացված հայտերում հարվերով պահանջված փաստաթղթերի առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Armepps համակարգի միջոցով ներկայացված երկու մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես Պրո Բիլդերս ՍՊԸ-ի Հայրով ներկայացված Հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ փողերի փոխանցումներ պարունակող կայք էջի հղումը նախորդ փուլում հայտարարագրին է: Անհրաժեշտ է ներկայացնել նոր հայտարարագրի կայք էջի հղումը: Հավելված 1.1-ով հստակ սահմանել քանի փարի է երաշխիքը: Ռաֆելգրիգ ՍՊԸ-ի՝ Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի բնութագիրը ամբողջությամբ և հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքի հատկանիշները: Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն գնման

առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով փրակներ պակասնություններ, ուստի անհրաժեշտ է հստակեցնել ընթացակարգին ներկայացված հայտի՝ Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի բնութագիրը հնարավորինս բացառելով «, +/-, «ոչ ավել, քան», «ոչ պակաս, քան», «առնվազն» «առավելագույնը» և նմանափայ այլ արտահայտությունները, ինչպես նաև խցիկը բնական մարմար թե գրանիտ, հայելին խցիկի ողջ բարձրությամբ թե հայլային էֆեկտով չժանգոտող պողպատ : Հավելված 1.1-ով հստակ սահմանել քանի փարի է երաշխիքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները

3.1 «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում **Armepps** համակարգի կողմից իրականացված հարցման արդյունքում մասնակիցների գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ԶՎՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1		
	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
ՈԱՖԵԼԳՐԻԳ ՍՊԸ	6 983 000 /վեց միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար/	1 396 600 /մեկ միլիոն երեք հարյուր ինսունվեց հազար վեց հարյուր/	8 379 600 /ոութ միլիոն երեք հարյուր յոթանասունից հազար վեց հարյուր/
Պրո Բիլդերս ՍՊԸ	6 608 333 /վեց միլիոն վեց հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք/	1 321 667 /մեկ միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր վաթսույոթ/	7 930 000 /յոթ միլիոն ինը հարյուր երեսուն հազար/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

4.1 «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում հարցումներ չեն առացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովի նիստը կատարելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին.

5.1 «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով սույն արձանագրության 2.1 կետը և ինքն ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 41-րդ կետը որոշեց նիստը կատարել մեկ աշխատանքային օրով՝ Պրո Բիլդերս ՍՊԸ-ին և Ռաֆելգրիգ ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև նիստի կատարման ավարտը շտկել անհամապատասխանությունները, հավասակ դեպքում մերժել վերը նշված մասնակցի հայտերը ինքն ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի» կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

5.2 «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Էլենկարյանի Լուսինայի ծանուցել Պրո Բիլդերս ՍՊԸ-ին և Ռաֆելգրիգ ՍՊԸ-ին սույն որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

6.1 .Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 17.03.2025թ. ժամը 15:00.

7. «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

7.1 Պրո Բիլդերս ՍՊԸ-ն և Ռաֆելգրիգ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են անհամապատասխանությունները:

7.2 «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2025/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց.

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ 2025/4» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Պրո քիլդերս» ՍՊԸ-ին:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
- Հրավերով սահմանված ժամկետում ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկ «Պրո քիլդերս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝




L. Զաքարյան


հանձնաժողովի անդամներ՝



Ա. Առաքելյան




Ս. Պողոսյան



Բ. Գասպարյան

հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Գևորգյան